ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ _____ 2024 թվականի №___Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի №32-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023 թվականի փետրվարի 1-ի «Գազամատակարարման համակարգում կարգավորվող սակագների հաշվարկման մեթոդիկան հաստատելու մասին» №32-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի՝ գազամատակարարման համակարգում կարգավորվող սակագների հաշվարկման մեթոդիկայի՝

1) 13-րդ կետի 4-րդ ենթակետում «ենթակա են պարտադիր կատարման առնվազն 90 տոկոսի չափով» բառերը փոխարինել «Առաջին հնգամյա ժամանակահատվածի համար ենթակա են պարտադիր կատարման առնվազն 81 տոկոսի չափով, իսկ Երկրորդ հնգամյա ժամանակահատվածի համար՝ առնվազն 90 տոկոսի չափով» բառերով, իսկ «սակագների հաշվարկներով նախատեսված մեծության առնվազն 90%-ից պակաս կատարված լինելու դեպքում հաշվարկային մեծության 90%-ի» բառերը՝ «սույն ենթակետով նախատեսված պարտադիր կատարման ենթակա նվազագույն

շեմից պակաս կատարված լինելու դեպքում պարտադիր կատարման ենթակա նվազագույն մեծության» բառերով,

2) 15-րդ կետից հանել «, այդ թվում՝ Առաջին հնգամյա ժամանակահատվածում՝ աճողական մինչև 80 միլիարդ դրամ» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
___ _____ 2024թ.